



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 հոկտեմբերի 2019 թվականի N 1379 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ (ՀՈՂԱՅԻՆ
ՀԱՇՎԵԿՇԻՌԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի
և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656
որոշմամբ հաստատված կարգի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության
կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի հողային ֆոնդի
առկայության և բաշխման վերաբերյալ հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)՝ 2019
թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության էկոնո-
միկայի նախարարին, Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախա-
րարին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածք-
ների նախարարության ջրային կոմիտեի նախագահին՝ իրենց կողմից կատարվող
աշխատանքների արդյունքում հողային ֆոնդի կազմում կատարվող փոփոխությունները
(բազմամյա տնկարկների հիմնում, նոր հողերի իրացում, ոռոգվող հողերի նոր ելքեր,
անտառների հիմնում և այլ փոփոխություններ) ներկայացնել Հայաստանի Հանրապետու-

թյան մարզպետներին, համապատասխան համայնքների ղեկավարներին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա կադաստրի կոմիտե՝ հողերի ընթացիկ հաշվառումն իրականացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝ անտառաշինական ծրագրերի իրականացման ժամանակ հայտնաբերված հողային ֆոնդի բաշխման անճշտությունները, անտառային հողերի, ինչպես նաև ազգային պարկերի, արգելոցների, արգելավայրերի սահմաններն ու տարածքները կառավարման պլաններին համապատասխան ճշգրտելուց հետո համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության մարզպետների, համայնքների ղեկավարների հետ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա կադաստրի կոմիտե՝ ընթացիկ հողային հաշվեկշռում ընդգրկելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2019 թ. հոկտեմբերի 15
Երևան



Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
հոկտեմբերի 3-ի N 1379-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ (ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ)

NN ը/կ		Տարածքը (հազ.հեկտար)	Որից՝ նոոգվող
	Հայաստանի Հանրապետության տարածքը	2'974.3	208.7
	այդ թվում՝		
1.	Հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության		
1)	գյուղատնտեսական նշանակության հողեր	2'044.2	155.2
	որից՝		
ա.	վարելահողեր	444.8	118.2
բ.	բազմամյա տնկարկներ	36.4	35.5
գ.	խոտհարքներ	121.1	1.5
դ.	արոտներ	1'051.1	
ե.	այլ հողատեսքեր	390.8	
2)	բնակավայրերի հողեր	151.9	53.1
	որից՝		
ա.	տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողեր	94.6	52.9
3)	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	38.6	
4)	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	13.1	
5)	հատուկ պահպանվող տարածքների հողեր	335.6	
6)	հատուկ նշանակության հողեր	30.5	
7)	անտառային հողեր	334.0	0.4
8)	ջրային հողեր	25.8	
9)	պահուստային հողեր	0.6	
2.	Հողային ֆոնդն ըստ սեփականության սուբյեկտների		
1)	քաղաքացիների	537.7	180.2
2)	իրավաբանական անձանց	36.0	5.5
3)	համայնքային	1'026.7	21.2
4)	պետական	1'373.2	1.6
5)	օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների	0.7	0.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ



Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ